

Աղոնք չեն ուրեմն մեր նուազը, այլ
այն իսկ՝ զոր կը տեսնենք Ղեւոնդեանց
սեղանին վրայ: Հոս յետ կերակրոյն՝ Ս.
Յովսէփ, որ իբրեւ կաթողիկոս՝ բազմա-
կանաց մէջ երիցագոյնն էր, «յոտն եկաց»,
մինչ ղեռ իւր ճաշակիցները նստած կը
մնան. «եւ սկսաւ զոչրախոչրեան նոռակն
մատուցանել եւ ասել»: Զայն «մատու-
ցանելու» համար հարկաւ բռնած էր. եւ
ճիշդ ինչպէս այժմ կը լինի, արտասանեց
բաժակաճառ մը՝ պարագային համեմատ:
Իրենց պարագայն յայտնի էր. յաջորդ օրը
պիտի նահատակուէին հաւատոց համար.
այս էր նոյն պահուն ամենէն կարեւոր,
նուիրական եւ իրենց ուշադրութիւնն ամ-
բողջապէս գրաւող խնդիրը. հետեւաբար
բաժակաճառին նիւթն ալ այս պիտի լի-
նէր: Եւ սկսաւ այսպէս. «Ուրախ լերուք
ամենեքեան ի Քրիստոս. քանզի վաղիւ
այս ժամ իցէ՝ ահա մոռացեալ իցէ մեր զա-
մենայն նեղութիւնս եւ զչարչարանս զոր
կրեցաք»: Յառաջ տանելով՝ զուշակեց թէ
առաջին նահատակը պիտի լինէր իրենց
անուս երիցակիցը զոր տեսանք յառաջա-
գոյն (աստ, 165). մխիթարեց ու սրտա-
պընդեց զամէնն երկնաւոր բարեաց յու-
սով: Յիշեալ քահանայն յուզուած՝ պա-
տասխանեց կաթողիկոսին, մաղթելով՝ ի-